

**ԺԶ. ԴԱՐԻ ՀԱՅ ԽՈՇՈՐԱԳՈՅՆ
ՔԵՐԹՈՂԸ.
ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ**

ՀԵՆՐԻԿ ԲԱԽԶԻՆԵԱՆ

ԺԶ. դարում եւս հայ գրական-գեղարուեստական մտքի հիմնական կրողը բանաստեղծութիւնն է: Այն շարունակում եւ իւրովի զարգացնում է նախորդ հարիւրամեակների բանաստեղծական ավանդոյթները, արծարծում նոյն թեմաներն ու մոտիւնները՝ հանդէս գալով ավանդական ժանրային համակարգով: Նախորդ դարում գրեթէ լիովին տեղի տուած աշխարհիկ տաղերգութիւնը վերստին ասպարէզ է իջնում եւ առաւել անկաշկանդօրէն հնչեցնում սիրոյ, բնութեան ու վայելքի երգը: Դա արգասիք էր վանական քերթութեան յեղաշրջումի եւ աշխարհիկ ոգու լայն տարածման:

Թէ՛ հայրենիքում եւ թէ՛ գաղթօջախներում հանդէս են գալիս մի շարք քնարերգուներ (Մարկաւազ Բերդակցի, Զաքարիա Գնունեաց, Յովասափ Սեբաստացի, Սիմէոն Ապարանեցի, Նիկողայոս Ստամպոլցի, Մինաս Թոխաթցի), որոնք մեծաւ մասամբ լինելով ժողովրդական տարերքին մերձ ստեղծագործողներ, առաւել ազատ են կրօնական մտածողութեան ու գաղափարաբանութեան կաշկանդումներից...

Դարի խոշորագոյն բանաստեղծական անհատականութիւնը Գրիգորիս Աղթամարցին է:

Աղթամարցու ծննդեան եւ մահուան թուականներն անյայտ են: Առկա տուեալների հիման վրայ ենթադրւում է, որ նա ծնուել է ԺԵ դարի վերջին¹: Յայտնի են ծնողների անունները՝ Սքանդար եւ Շահում: Մի առիթով բանաստեղծն իր հօր մասին ասել է.

Նաեւ զհայրն իմ պատուական՝
Զքաջն կարի, յոյժ աննըման (= Իսկենդեր),
Զոր եւ փրկիչն Յիսուս արքայն
Պահէ աջովն իւր անսասան² (Աղթամարցի, էջ 16)

Գրիգորիսը սերուած է Արծրունիների շառաւիղ Սեֆեդինեան իշխանական տոհմից: Հօրական գծով պապը, գրիչ Մարգարէ Արճիշեցու վկայութեամբ, Գուռջիբեկի որդի Սմբատն է՝, որին Աղթամարի կաթողիկոս Ստեփանոս Դ. Տղան (գ.հ. 1465-89) 1466ին օծել է թագաւոր⁴: Նոյն գրչի վկայութեամբ, Ջաքարիա անունով Աղթամարի երկու կաթողիկոսներ եղել են Գրիգորիսի հօրեղբայրները: «... եւ արեանառու հաւրեղբարցն՝ սրբազան կաթողիկոսացն Տէր Ջաքարեանցն»⁵: Բանաստեղծն ինքը իր մի տաղի վերջում խնդրել է յիշել «Եւ զհօրեղբարքն իմ սրբազան»⁶:

Յայտնի են նաեւ Գրիգորիսի երկու եղբայրների անունները՝ դրուած իրենց նշանաւոր նախնիների պատուին՝ Գուռջիբեկ եւ Սմբատ: Ի դէպ, նրանցից առաջինը, ըստ Մարգարէ Արճիշեցու 1534ին գրուած յիշատակարանի, ծովամոյն է եղել, իսկ միւսն՝ այդ ժամանակ տակաւին եղել է «կանաչասաղարթ»⁷:

Ինչպէս ապացուցել է Հայր Մկրտիչ Պոտուրեանը, Գրիգորիսը 1512ին, Յովհաննէս կաթողիկոսից յետոյ, արժանացել է Աղթամարի հայրապետական գահին⁸: Այս ժամանակ նա բաւական երիտասարդ է եղել եւ տակաւին շարունակել է իր ուսումնառութիւնը: Կաթողիկոս դառնալուց չորս տարի անց՝ 1516ին գրած իր մի քերթուածի վերջում բանաստեղծը վկայել է, որ այդ գործը գրել է

Առ յոտըս երջանիկ րաբունապետի՝

Գրիգորիոս անուն արթուն հրսկողի,

Քաջ հրոնտոր անյաղթ փիլիսոփայի

Եւ երիցս երանեալ մեծ վարժապետի: (Աղթամարցի, էջ 120)

Դրանից երեք տարի յետոյ՝ 1519ին իր մէկ այլ քերթուածի վերջում Աղթամարցին ասել է.

Առ մեծ րաբունապետն ճառս այս յարմարի,

Որ եւ անուն նորա Գրիգոր յորջորջի.

Սորին սպասատրէ եւ աշակերտի՝

Գրիգորիս, մականունս է Աղթամարցի... (Աղթամարցի, էջ 127)

Իր ուսուցչին բանաստեղծը յիշել է նաեւ մի քանի այլ գործերում: Ընդունելի է ուսումնասիրողների այն կարծիքը, թէ այդ «մեծ րաբունապետը» Գրիգոր Զորթան Արճիշեցին է⁹: Ըստ պատմիչ Առաքել Դաւրիժեցու (ծն. 1670), բոլոր արեւելեան վարդապետները «ի Չորթանէն սերեցան»¹⁰:

Տարբեր դպրոցներում մանկավարժական եռանդուն գործունէութիւն ծաւալած այս ուսուցչապետը 1490ին գրուած մի յիշատակարա-

նում յիշում է իբրեւ Ուռնկարի (Վասպուրականի չրջան) Սուրբ Նշան վանքի առաջնորդ եւ «քաջ րարունի»: Հաւանաբար Գրիգորիս Աղթամարցին ուսանել է Գրիգոր Արճիշեցու մօտ հենց այդ վանքում, քանի որ, ինչպէս յայտնի է, նա «Գանձ եւ Մեղեդի է ձօնել Ուռնկարու Ս. Նշան եկեղեցուն եւ այդ գանձը գրել է «հրամանաւ» Գրիգոր Բաբունու»¹¹:

Ըստ երեւոյթին, Գրիգոր Զորթան Արճիշեցուն աշակերտելուց յետոյ Գրիգորիսը գրչութեան ու մանրանկարչութեան արուեստ է ուսանել ժամանակի նշանաւոր գրիչ եւ ծաղկող Յովսէփ Աղթամարցու (մհ. 1544) մօտ: Յետագայում (1524 թ.) նա վերջինիս ձօնել է մի ներբող, որտեղ ասուած է.

Սուրբ եւ մաքուր հայր պատուական,
Ազգի պարծանք եւ անըման,
Յոյժ փափաքիմ քո սուրբ տեսեան,
Զո անառակ որդիս անրան... (Աղթամարցի, էջ 163)

Գրչութեան եւ մանրանկարչութեան արուեստի մէջ հմտացած Գրիգորիսն իր ուսուցչի՝ Յովսէփ Աղթամարցու հետ միասին պատրաստել է մի շարք գրիչներ ու ծաղկողներ, որոնց մէջ է նաեւ ժամանակի անուանի մշակութային գործիչ Զաքարիա Գնունեացը: Վերջինս իր մի յիշատակարանում ներկայացել է իբրեւ «աշակերտ շնորհազարդ Գրիգորիս կաթողիկոսին եւ Յովսէփ վարդապետին»¹²: Գրիգորիս Աղթամարցու աշակերտներից է եղել նաեւ վերոյիշեալ գրիչ Մարգարէ Արճիշեցին, որն իր մի յիշատակարանում վկայել է, թէ «Գրիգորիս կաթողիկոսն Աղթամարի... զծաղկազիրն անձանձիր ուսոյց ծառայիս»¹³:

Ըստ առկայ տուեալների¹⁴, Գրիգորիս Աղթամարցին 1525-1536ի ընթացքում զբաղուել է գրչութեամբ ու մանրանկարչութեամբ, ինչպէս նաեւ սրբագրել, խմբագրել ու պատուիրել է մի շարք արժէքաւոր ձեռագիր մատեաններ: Այդ աշխատանքները նա կատարել է այլեւայլ վանքերում (Պառաբաստ, Արճէշ, Վարագ), ուր ստիպուած է եղել հանգրուանել քաղաքական փոթորկուն կեանքի թելադրանքով: Նա ինքն իր տաղերում վկայել է, թէ «մոլորական եմ ի տանէ», «թափառնիկ» եւ «ղարիպ կենօք շրջիմ ես»:

Աղթամարցու ամենանշանակալից խմբագրական աշխատանքը Ալեքսանդր Մակեդոնացու Պատմութեան նրա կազմած բնագիրն է: Նա ոչ միայն հիմնովին վերախմբագրել է վաղմիջնադարեան այդ նշանաւոր թարգմանական յուշարձանը, այլեւ հարստացրել է այն բազմաթիւ ինքնաստեղծ կաֆաներով (չափածոյ ամփոփիչ հատուածներ) ու ման-

րանկարներով, որոնց շնորհիւ նա Հայր Գարեգին Յովսէփեանցի գնահատմամբ, դարձել է իր ժամանակի մանրանկարչութեան «լաւագոյն ներկայացուցիչներից»¹⁵ մէկը:

Զաքարիա Գնունեացի վերոյիշեալ յիշատակարանի համաձայն, որ գրուած է 1544ին, Գրիգորիս Աղթամարցիին այդ ժամանակ դեռեւս ողջ է եղել: Կաթողիկոս-բանաստեղծը վախճանուել է 1544-1546ի միջեւ, քանի որ 1546ին արդէն որպէս Աղթամարի կաթողիկոս յիշատակուում է Գրիգորիս Փոքր Աղթամարցիին (գ.Վ. 1544-1586):

Գրիգորիս Աղթամարցու բանաստեղծական ժառանգութիւնը ներառում է մօտ երեք տասնեակ տաղեր եւ բազմաթիւ կաֆաներ՝ գրուած Ալեքսանդր Մակեդոնացու եւ Պղնձէ Քաղաքի Պատմութիւնների համար: Տաղերի զգալի մասը կաթողիկոս-բանաստեղծը յօրինել է երիտասարդ հասակում՝ 1510-1520ականներին: Զգալով Աղթամարցու բանաստեղծական շնորհքը, Գրիգոր Չորթան Արճիշեցին, որը նաեւ բանաստեղծ է եղել եւ վկայաբանութիւնների հեղինակ, Ուռնկարի վանքում պատուիրել է իր սանին այս կամ այն թեմայով տաղեր ու զանձեր գրել: Դրանցից են Ուռնկարի Ս. Նշան վանքին ձօնուած զանձը եւ մեղեդին: Դեռեւս անփորձ բանաստեղծը այդ պատուիրուած գործերը ստեղծել է առանց խոր ներշնչանքի, ուստի եւ դրանք գրեթէ զուրկ են գեղարուեստական արժէքից: Այսուհանդերձ ապագայ մեծ բանաստեղծին «մատնում են» զանձի որոշ տողեր, ինչպես.

Դու քառասար սուսեր սքխրական,

Դու խորտակո՞ղ գրնդին դիւական... (Աղթամարցի, էջ 146)

Առաւել ուշագրաւ է Աղթամարցու մեզ յայտնի առաջին թուակիր տաղը (1515), որ անձնական-ապաշխարական բնոյթի հոգեւոր երգ է՝ գրուած միջնադարեան համանման քերթուածների ոգով ու ոճով: Այս տաղում, ինչպէս նկատել է Մայիս Աւդալբեգեանը, «արդէն նշմարուում է մի գիծ, որ յետոյ որակ պիտի դառնայ նրա ստեղծագործական դիմապատկերում: Որքան էլ նա երկմտում է մեղքերի ծանրութեան եւ իրեն սպասող պատժի չափերի առջեւ եւ ողորմութիւն հայցում Աստծուց, նա այսուհանդերձ յուսահատ չէ»¹⁶: Աւելին, «երկխօսելով» իր մեղսալից անձի հետ, նա յորդորում է. «Մ'երկմըտեր, աներկբա յուսա՝»¹⁷: Հեռներից աւելի ծանրակշիռ մեղքերի մէջ թաղուած մարդն անգամ զուրկ չէ փրկութեան յոյսից, որը պարզ խոստովանութիւնն է («Եւ յուսով դու խոստովանեա՝»¹⁸): Այսպէս է դատում երիտասարդ կաթողիկոս-բա-

նաստեղծը, որի խօսքն արդէն երբեմն փայլատակում է ինքնօրինակ պատկերներով:

Ջրօքըդ գիս ոռոգեա՛,

Ձի տապօք չարին չորացայ... (Աղթամարցի, էջ 105)

Յուսավառ ու լաւատես բանաստեղծը որքան էլ ձգտում է յաղթահարել ապագայի հանդէպ երկմտանքը, սակայն որպէս երկփեղկուած էութեամբ միջնադարեան մարդ, նա մնում է հոգու եւ մարմնի տանջալից երկընտրանքի առջեւ: Այս թեման Աղթամարցին նորից ու նորովի արծարծում է իր նշանաւոր նախորդներ Յովհաննէս (1230ականներ-1293) եւ Կոստանդին (1250ականներ-1314, 1328) Երզնկացիներից յետոյ եւ որոշ չափով նաեւ նրանց հետեւութեամբ: Ահա անձնական բանաստեղծութեան ձեւի մէջ արտայայտուած նրա տուայտանքը:

Հոգիս ի մարմինս կուլայ,

Հակառակ եմ՝ չեմ միաբան:

Ոչ դուր, ոչ դադար առնում,

Այլ շրջիմ ես թափառական,

Ոչ ունիմ տեղ՝մ ես դարան

Կամ աւուր մ'երկու ապաստան... (Աղթամարցի, էջ 154)

Եւ երկու կրակի մէջ այրուող այս բանաստեղծն էլ ձգտում է կատարել թէ՛ հոգու եւ թէ՛ մարմնի կամքը՝ արտայայտելով իր սէրը ինչպէս Աստծոյ, այնպէս էլ նրա ստեղծած աշխարհի հանդէպ: Ընդ սմին, յաճախ նա իր երկնային ու երկրային սէրն արտայայտում է գիրկընդխառն: Մի երեւոյթ, որի ակունքները բխում են Գրիգոր Նարեկացուց (951-1003) եւ իր ինքնօրինակ ու չափազանց ուշագրաւ դրսեւորումը գտնում Աղթամարցու տաղերգութեան մէջ: Քննենք այդ երեւոյթը:

Աղթամարցին հեղինակել է մի քանի, այսպէս կոչուած, զուտ կրօնական տաղեր, որոնցից մէկն արծարծում է Քրիստոսի խաչելութեան թեման («Արեգակն Արդարութեան»), երեքը ուղղակիօրէն ձօնուած են Մարիամ Աստուածածնին՝ «Անեղին Տաճար», «Տապանակ Կազմեալ Անփուտ» եւ «Արքային Փակեալ Պարտէզ»: Առաջին երկուսը գովերգմաղթանքներ են, ուր իշխում են աւանդական պատկերները, ընդհանուր տեղիները, թէեւ կան նաեւ որոշ նորագոյն փոխաբերութիւններ, ինչպէս:

Թափանցիկ լուսոյն օթոց,

Չհուրըն ծըրաքեալ ի ծոց... (Աղթամարցի, էջ 175)

Երրորդ տաղում էլ նորագիւտ է Արեգակ-Քրիստոսին ծնած «գարնան առաւօտ» Տիրամօր փոխաբերութիւնը: Սակայն այդ տաղն առա-

Լեյ ուշագրաւ է այլ առումներով: Այստեղ Տիրամայրը ներկայացուած է ոչ միայն իր աստուածային, երկնային էութեամբ, այլեւ որպէս երկրային կին, ինչպէս Նարեկացու «Մեղեդի Ծննդեան»-ում: Հայ սիրերգութեան, ինչպէս նաեւ «Երգ Երգոց»-ի ու սաղմոսների ազդեցութեամբ Աղթամարցի Աստուածամօրը պատկերում է իրրեւ «ծաղիկ գարնան, վարդ եւ մանուշակ, շուշան, նարդոս 'ի ի քըրքում նըման», «ծառ արմատեմի ծաղկեալ», «կընդդուկ եւ զըմտո հալուէ», «մաքուր աղանի, տատրակ, սիրամարգ ոսկէտեսակ», «յակիմք, դահանակ գունով, սարդիոն, յասպիս լուտով, շափիւղայ գմրուխտ գեղով», «նոնեմեաց ծաղիկ պայծառ», «չըքնաղ վայելուչ մարմնով՝ լըցեալ մեծագին իւղով» եւն. (Աղթամարցի, էջ 168-171): Այս «աշխարհիկ գովերգութեամբ», սակայն, ամէն ինչ չի աւարտւում. բանաստեղծը նաեւ արտայայտում է իր սիրոյ զգացումը, ինչը չկայ Նարեկացու նշուած գործում: Ի դէմս Աստուածածնի, նա ասես դիմում է իր ցանկալի գեղեցկուհուն, ասելով.

Թէպէտ կամ ի նիմջ 'ի ի քուն,
Բայց ունիմ ըզսիրտս արթուն,
Վառեալ կամ ի քո սիրուն,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս...

Չայն տուր ինձ, ո՛վ տարփալի,
Մարմինս իմ նուաղեալ մաշի,
Սիրով ծարաւիմ յոգի,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս (Աղթամարցի, էջ 169-170)

Անառարկելիօրէն, Աստուածամօրն է ուղղուած նաեւ Աղթամարցու «Արեգակնափայլ Գեղով Լի Լուսին Ի Տասնուհինգէ» տաղը, թէեւ այստեղ Տիրամօր անունը չի տրւում: Որոշ ձեռագրերում այն խորագրուած է «Գովասանութիւն Առ Սուրբ Աստուածածինն Մարիամ», «Տաղ Ի Վերայ Սուրբ Աստուածածին»: Բացի այդ, տաղի երկրորդ տողի «Աչեր ծով ունիս» արտայայտութիւնը ուղղակիօրէն բխում է Աստուածածնին ձօնուած Նարեկացու յիշեալ մեղեդուց՝ «Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ ծաւալանայր յառաւատուն»¹⁹: Եւ վերջապէս, խնդրոյ առարկայ մեղեդում եւ Տիրամօրը ձօնուած նախորդ երեք տաղերում կան բաւականին պատկերային զուգահեռներ: Իր գունագեղութեամբ բաւական ազդեցիկ այս տաղում էլ առկայ է բանաստեղծի անձնական-զգացական վերաբերմունքը.

Վարդ եւ վայելուչ գունով, ցօղ առնուս ի վաղորդայնէ,
Արեւն երբ ի քեզ առնու, հիանայ ով գթեզ տեսանէ:
Հոտով քո արբեալ թըմրիմ, երբ քաղցրիկ հողմ ի քեզ հընչէ,

Փընջեալ երփնագարդ ծաղիկ, զքեզ բերած ի բարձր լեռնէ:
(Աղթամարցի, էջ 186)

Զիմանալով, որ տաղն ուղղուած է Մարիամ Աստուածածնին, կա-
րելի է այն ընկալել որպէս սիրոյ երգ: Ի դէպ, որոշ ընդօրինակողներ
այդպէս էլ ընկալելով՝ այն խորագրել են «Տաղ Ուրախութեան»:

Աղթամարցին հեղինակել է նաեւ կրօնական այլաբանութեամբ մի
շարք այլ տաղեր, որոնք թէ՛ միջնադարեան գրիչներից եւ թէ՛ նորօրեայ
ուսումնասիրողներից շատերը (Կարապետ Կոստանեան եւ այլք) ընկա-
լել են իբրեւ սիրոյ եւ ուրախութեան երգեր, զուտ աշխարհիկ տաղեր:
Մինչդեռ Գրիգորիս Աղթամարցին զուտ աշխարհիկ երգիչ չէ: Նա աշ-
խարհիկ սիրերգութեան ձեւերի մէջ փառաբանել է աստուածային լոյսն
ու գեղեցկութիւնը եւ արտայայտել իր սէրն այդ գեղեցկութեան հան-
դէպ, որի կրողը թէ՛ երկնային եւ թէ՛ երկրային արարածներն են: Ինչ-
պէս գրում է Հայր Ներսէս Ակինեանը, Աղթամարցու այն տաղերում, որ-
ոնք «նկատուած են առ հասարակ «սիրոյ երգեր», գեղեցիկ սեռին
նուիրուած գեղօցներ... Գրիգորիս ոչ թէ կնոջ սիրոյ երգիչ է անձուկ ի-
մաստով, այլ երգիչ է գեղեցկին (ընդգծումը մերն է - Հ.Բ.)... Անոր այս
խմբի տաղերուն մէջ կը զգացուի ստուգիւ բուռն արտայայտութիւն սի-
րոյ, բայց այս սերը երկրաբար չէ, այլ քրիստոնէական, երկնային»²⁰:

Նախ դիտարկենք «Գովեմ Զքեզ, Մարմնով Հրեշտակ» տաղը, որ Ա-
կինեանի կարծիքով, ձօնուած է եկեղեցուն, իսկ ըստ բանասէր Մայիս
Աւդալբեգեանի, «այն կարող է ձօնուած լինել անհատ մարդու՝ իր ժա-
մանակակիցներից որեւէ մէկին» (Աղթամարցի, էջ 69): Այդ երկու
կարծիքներն էլ համոզիչ չեն: Ըստ էութեան, տաղը ներկայացնում է
Քրիստոսի խորհրդանշական պատկերը եւ բաւական հարազատ է Նա-
րեկացու «Վարդավառի Տաղ»ին, որ նոյն այդ լուսեղէն պատկերն է վե-
րարտադրում: Համոզուելու համար բերենք հետեւեալ զուգահեռը.
Աղթամարցի՝

Իբրը խընձոր մի ի ճրդի,
Գունագեղեալ ազգի ազգի,
Տեքեապատ քօղեալ ծածկի,
Հոտն ի նմանէ արտաբուրի:

Գունով ես դու պըտտով բարի...

Տեքեւն է զգեստ պատմութանի,
Պատշաճաւոր ըստ կըրօնի... (Աղթամարցի, էջ 180-181)

Հմտօ՝ Նարեկացի՝

Շողշողէր պըտուղն ի ճըղին,
Քրքում վակասիր պըտուղն,
Սնանէր խուռըն տերետով.
Տերերն տաւիղ տուողին,
Զոր երգէր Դաւիթ հրաշալիւն²¹:

Աղթամարցին այս անգամ էլ առաջ անցնելով իր մեծ նախորդից, արտայայտում է նաեւ իր զգացական սէրն այդ աստուածային պատկերի հանդէպ.

Սիրով քո սիրտս իմ տոչորի,
Նուաղեալ մարմինս այլագունի... (Աղթամարցի, էջ 181)

Աղթամարցուց շուրջ մէկ դար առաջ Առաքել Սիւնեցին (1350ականներ-1425) էլ Քրիստոսին երգել է այլաբանօրէն, աշխարհիկ սիրերգութեան ձեւով: Սակայն այդ երեւոյթը Աղթամարցու քնարերգութեան մէջ շատ աւելի բնութագրական ու որակական դեր է կատարում: Ի դէպ, ինչպէս նկատել է Ակինեանը, Աղթամարցին կրել է Սիւնեցու ազդեցութիւնը, որ «տեղ-տեղ ակներեւ իսկ կը զգացուի»²²:

Քրիստոսին ձօնուած Աղթամարցու տաղում կայ նաեւ մի այսպիսի տող. «Ծառ քո ի դրախտն, որ յԱդէմի» (Աղթամարցի, էջ 180): Համաձայն տողով է սկսւում բանաստեղծի այլաբանական տաղերից մէկ ուրիշը՝ «Դու ես յԱդինայ Դրախտէն» (Աղթամարցի, էջ 182): Այս տաղը Ակինեանն իրաւացիօրէն գետեղել է Քրիստոսին ձօնուած քերթուածների շարքում, եւ նրան համամիտ է նաեւ Աւդայրեգեանը, որը նոյնպէս իրաւացիօրէն նկատել է. «Եթէ «Դու ես յԱդինայ դրախտէն» տաղը Աղթամարցին նուիրում էր Քրիստոսին, ապա դրա մէջ նա դնում էր իր սեփական զգացման արտայայտութիւնները իրական կամ տեմպորալ մի արարածի նկատմամբ, յոյզ ու ջերմութիւն հաղորդելով բանաստեղծութեանը»²³: Յիրաւի, երիտասարդ կաթողիկոս-բանաստեղծը իր ծածուկ կրքերն ու զգացումները ակամայ կամ ենթագիտակցօրէն հեղում է իր կրօնական այլաբանական տաղերում: Ինչպէս Աստուածածնին նուիրուած տաղում, այստեղ էլ բանաստեղծը բացականչում է. «Թըմբեալ արբեցայ յոգի» եւ ապա.

Առ իս տեսանեմ ըզբեզ,
Նա ծաղկիմ որպէս ըզուշան:

Ի սէր քո վառիմ անշէջ,
Նըւաղիմ առ քոյդ տեսութեան,

Պասքեալ ծարաւիմ հոգով

Սոսկալի եւ յոյժ հրաշագան... (Աղթամարցի, էջ 182-183)

Ուշագրաւ է, որ բանաստեղծը Աստուածամօրն ու նրա Որդուն գովերգում է համանման մակդիրներով, համեմատութիւններով ու փոխաբերութիւններով, ինչպէս օրինակ, «Արեգակնափայլ գեղով լի լուսին ի տասնութինգէ» հմտ. «Արեգակն է քեզ նման կամ լուսինն ի հընգէտասան» (Աղթամարցի, էջ 185, 183):

Կրօնական ալլաբանական տաղերից մէկ ուրիշը դարձեալ սկսւում է դրախտի համեմատութեամբ՝ «Դու դրախտ Եդեմայ տընկեալ յանդէն»: Որոշ ընդօրինակողներ այս քերթուածը խորագրել են «Տաղ Սիրոյ»: Սակայն այստեղ էլ գովերգւում է աստուածային գեղեցկութիւնը.

Որպէս զնախաստեղծըն գեղադէշ ես,
Տիպ եւ գաղափար տեառն Աստուծոյ ես,
Պատկերով պատուեալ, քան զՍիբայէլ ես,
Ի հողեղիմացքս հըրեղէն ես (Աղթամարցի, էջ 192)

Նկատենք, որ Աստուածածնին նուիրուած տաղերից մէկում էլ ասուած է. «Սքանչելատեսիլ դիմօք, Սիբայէլ հրեշտա՞կն ես միթէ» (Աղթամարցի, էջ 185): Սակայն ինդրոյ առարկայ տաղում գովերգողը որոշակիօրէն Աստուածամայրը չէ, այլ աստուածային գեղեցկութիւնը, ուժն ու բանականութիւնը կրող մարդը՝ իր իզական եւ արական սկըզբով: Այս եզրակացութեանն են մղում նաեւ «Դու ես Արեգակ, Լուսին Ի Լրման», «Մաքուր Պատկերով Նման Հրեշտակի» եւ «Ահա Այգիք Մեր Ծաղկեցան» տաղերը, որոնք նոյնպէս զուտ աշխարհիկ սիրոյ երգեր չեն, այլ ներառում են միաժամանակ սէրը Աստծոյ եւ նրա արարածի հանդէպ:

Որ խօսքն իսկապէս մարդ-արարածի մասին է, վկայում են վերը բերուած քառատողի «հողեղէն» բառը, ինչպէս նաեւ նոյն տաղի «Ուշիմ եւ խոհեմ՝ ւ անօրինակ մարդ» տողը (Աղթամարցի, էջ 194): Խօսքը, սակայն, «անօրինակ» մարդու մասին է, որ «ի հողեղիմացս» հրեղէն է, հրեշտակի նման «մաքուր պատկերով», թէ՛ երկնքի եւ թէ՛ երկրի զարդ: Բանաստեղծն Աստուածաշնչից յիշում է նմանօրինակ երեք հերոսների. «Մէք՝ ւ Աբիստղոմ, Յովսէփ սխրալի» (Աղթամարցի, էջ 206): Այդ հրեշտակներպ մարդը եթէ կին է, ապա Աստուածածնի նման «քափանցիկ լոյսով» արեւական է, մեղմընթաց «լիալիր լուսին», «աստղ վառ ի վառ ցօղ առաւօտու», հարաւի «աւետաքեր հողմ», «փայլուն մարգարիտ ի մէջ սաղափին», «եաղութ ու զմրութ, գոհար մեծագին»,

Նոճի, մըրտենի, սանտալի եւ սարդ,

Նումանի ծաղիկ եւ փըթըթեալ վարդ...

105-2006



Կեփազայ ոսկի եւ մաքուր արծաթ,
Վարսօք վայելուչ որպէս ըզթուխ սաթ...
Նարինճի ծաղիկ, կալիսի տերեւ...
Մուշկ եւ մանուշակ, հովիտ ծաղկալի,
Նարգիզ, նոնոֆար, բլուր կընդըրկի... (Աղթամարցի, էջ 193-196)

Եթէ նա այր է, ապա զօրաւոր է խաչի նման, «ահաւոր տեսլեամբ, քան զկարի քաջ», որ կանաչ վրանի ներքոյ բազմում է ահեղատես: Նա նման է Քրիստոսի խորհրդանիշ առիւծին (հմտ. Նարեկացու «Ես ձայն զառիւծուն ասեմ»), որին դիմելով՝ բանաստեղծն ասում է.

Առիւծ ի շամբի բազկօք զօրաւոր,
Ամէն կենդանեաց ես դու թագաւոր,
Երբ աղաղակես ձայնիդ ահաւոր,
Սարսափեն, դողան երէքդ բոլոր: (Աղթամարցի, էջ 202)

Նա նաեւ բարձրագնաց «քաջ արծիւ» է, «գեղեցիկ բազայ» եւ ապա դարձեալ՝ կանացի քնքշութիւնը մարմնաւորող «փայլուն սիրամարգ ոսկէփետուր», «քաղցրաձայն կաքաւ», որին դիմելով՝ բանաստեղծը ստեղծարանում է հետեւեալ գունագեղ քառատողերը.

Սուրաթդ է սաղաֆ մարգարտաքրտունք,
Է՛ փուստայ տըհան ու բարակ շրթունք,
Սուտակ, դահանակ ու շարեալ ակունք,
Բիւրեղ քանդակեալ մատունք՝ ւ ատամունք:

Քան զգարնանային ամպ քաղցրահոսան,
Վայելուչ գունով զերդ ըզծիածան,
Հողմով տարբերի քո հերդդ դեղձան,
Երբ որ ելանես սահրայ ի սէյրան:

Կիսարի, նոճի, կանաչ ձիթենի,
Նարինջ ու թուրինջ, տունկ պալասանի,
Տօսախ, սինուբար, շրմշատ ու տուրի,
Միշտ կանաչ կենաս, քան զնըշդարենի: (Աղթամարցի, էջ 203-204)

*Եւ այս «անօրինակ» մարդուն (թէ՛ գեղեցիկ կնոջ եւ թէ՛ զօրեղ այր մարդու մարմնաւորմամբ) բանաստեղծը ոչ միայն հմայուած գովերգում է, այլեւ յայտնում է նրան իր սէրը, իր նուիրական զգացումները. Անկեալ եմ հիւանդ մերձ առ քոյդ դրան,
Սպասեմ հանապազ ես առողջութեան...*

Գիշեր ու ցորեկ եմ ես երերուն,

Ոչ կենամ ի դուրս 'ի ոչ օթիմ ի տուն...

Իմ սիւն ի սըրտի 'ի իմ ուրախութիւն,
Իմ շունչ ու հոգի 'ի իմ կենդանութիւն...

Սիրով լափեցիր 'ի արիւր գսիրտըս խոց,
Կու տապիմ 'ի այրիմ որպէս ի հընոց.
Սըրտես կու թափի յովով հուր ու բոց,

Զայդ աստուածագիծ պատկերդ քո ինձ ցոյց: (*Աղթամարցի*, էջ 193, 196, 201, 209)

Վերը բերուած հատուածների նման գունագեղ նկարագրութիւններ եւ յուզառատ տողեր ենք գտնում յատկապէս «Ահա Այգիք Մեր Ծաղկեցան» տաղում, որ «Երգ Երգոց»ի մի իւրօրինակ բանաստեղծական մշակում է: Հիմք եւ «պատուար» ունենալով աստուածաշնչեան այդ գիրքը, Աղթամարցին թոյլ է տուել իրեն է՛լ աւելի առատօրէն հեղելու իր զգացմունքները: Այս տաղում էլ գովերգւում է գեղեցիկ կնոջ մարմնաւորմամբ «անօրինակ», կատարեալ մարդը, որն «անհաս» է, «հրաշագան», «ահեղակերպ լուսոյ արքայ», «վարսաւոր սըրովքէ»: Ի դէպ, վերջին փոխաբերութիւնը բանաստեղծը գործածել է նաեւ Աստուածածինն նուիրուած տաղերից մէկում (*Աղթամարցի*, էջ 185): «Ահա Այգիք Մեր Ծաղկեցան» տաղն էլ ձեռագրերից մէկում խորագրուած է «Առ Սուրբ Աստուածածինն» (*Աղթամարցի*, էջ 213): Սակայն այս տաղի հերոսուհին էլ Աստուածածինը չէ, այլ նրա աստուածային յատկանիշներով կին-արարածը, որ նաեւ չափազանց հոգեղէն է: Եւ նրա հանդէպ իր բոլուն սէրն է արտայայտում բանաստեղծը՝ երգ-երգոցեան պատկերների կողքին ստեղծելով ինքնօրինակ պատկերներ, որոնք երբեմն իսկական բանաստեղծական գիւտեր են, ինչպէս.

Էթէ յաչաց մարմնոյս ծածկիս,
Մըտաց աչօք ինձ երեւիս.
Բնակեալ ես դու յիմում սրտիս,
Ծրարեալ ունիմ զքեզ ի հոգիս...

Յորժամ ի քէն լինիմ հեռի,
Սիրտս իմ սիրով քո հըրդեհի.
Զերդ գեղջերում, որ փափագի,
Յաղբերբս ջուրց միշտ յօժարի: (*Աղթամարցի*, էջ 214, 217)

Երբեմն այդ «անհաս» գեղեցկուհին այնքան «հասանելի» է, որ հնարաւոր են դառնում անգամ մտերմիկ ու տարփալից յարաբերութիւնները:

Բըխեն ըստինքդ կաթն եւ գինի,
Մեղր ի շըրթանցըդ քո կաթի,
Որով հոգիս իմ փափագի
Եւ նըւաղեալ յոյժ տոշորի...

Սիրով արքեալ քո ահաւոր
Ի սենեկին խորհըրդաւոր...

Զօր հանապազ ընդ քեզ կալով,
Ըզգեղ դիմաց քո դիտելով
Եւ խօսակից քեզ լինելով,
Ըստէպ ըստէպ համբոյր տալով: (*Աղթամարցի, էջ 213-214*)

Այսպիսով, ուրեմն, Աղթամարցու կրօնական ալլաբանութեամբ տաղերը յաճախ մասամբ կամ ամբողջապէս վերածել են աշխարհիկ սիրոյ եւ ուրախութեան երգերի, ետ մղելով հոգեւոր ենթատեքստը: Զգալով այս, բանաստեղծը տաղերի վերջում դիմելով իրեն՝ ասել է:

Է՞ր ունայնաբանես, Աղթամարցի,
Այս կեանքս անցաւոր է՝ քեզ յուշ լիցի...

Զգաստացի՛ր հիմիկ եւ կա՛ց ի յոտաց,
Լալով աղաչէ գժրիստոս Աստուած...

Թո՛ղ զւէր աշխարհիս այս անցւորական,

Զի դառն ու լեղի է յոյժ անպիտան: (*Աղթամարցի, էջ 198, 205, 212*)

Այս գղջական, ապաշխարական խօսքերով հանդերձ, Աղթամարցին, լինելով եկեղեցական ամենաբարձր աստիճանին կանգնած կուսակրօն-հոգեւորական, իր կրօնական-ալլաբանական սիրերգերով իսկական սխրանք է գործել: Անտարակոյս, այդ երգերի համար նա խստօրէն քննադատուել է ժամանակակիցներից չատերի, այդ թւում նաեւ իր ուսուցչի կողմից՝²⁴:

Աղթամարցուց պահպանուել են նաեւ վարդի եւ սոխակի ալլաբանութեամբ երեք տաղեր: Առաջին հայեացքից, այս գործերն էլ թւում են յայտնի սիրավէպի հիման վրայ յօրինուած սիրերգեր: Սակայն, ինչպէս նկատել է Աւդալբեգեանը, այս տաղերը եւս «ունեն քաքնուած ենթա-

տեքստ, որը հնարատրութիւն է ընձեռում դրանք դիտել նաեւ իբրեւ կրօնական այլաբանութիւն»²⁵։ *Ի դէպ, այդ տաղերից մէկը մի ձեռագրում խորագրուած է «Ի Սուրբ Աստուածածինն Եւ Գարրիէլ Հրեշտակն Օրինակեալ» (Աղթամարցի, էջ 130)։ Այս խորագիրը, սակայն, աւելի շատ տուրք է սիրավէպի այլաբանութեան աւանդական ընկալման։ Դժուար է ասել, թէ այդ տաղում վարդն ու սոխակը իսկապէս որոշակիօրէն Աստուածածինն ու Գարրիէլ Հրեշտակին են խորհրդանշում, բայց որ դրանք ունեն իրենց կրօնական հենքը, կասկածից վեր է։ Իրականութիւնն այն է, որ ինչպէս կրօնական-այլաբանական սիրերգերում, այնպէս էլ վարդին ու սոխակին նուիրուած տաղերում կրօնականն ու աշխարհիկը միաձուլուած են. ի դէմս երկնային երգում է նաեւ երկրայինը։ «Միայն պիտի նկատել, որ երբ բանաստեղծը ուղղակի սիրոյ պատմութիւն է անում, ապա արդէն երկրորդական է դառնում նրա կողմից տաղում այլաբանած կրօնական բովանդակութիւնը»²⁶։*

Վարդին ու սոխակին նուիրուած տաղերից առաւել ուշագրաւ է «Յետ Գնալոյ Վարդին Եւ Պլպուլն Յայգին» այլաբանական սիրերգը։ Սա մի շարք գործող անձերով դրամատիկական պոէմ է։ Առաջին իսկ քառատողում սկսւում է գործողութիւնը եւ զլխաւոր հերոսի՝ Պլպուլի տառապանքը։ Այգուց հեռանում է Վարդը, գիշերը գալիս է Պլպուլը եւ տեսնելով սիրուհու թափուր վրանը, փնտրում է նրան, կանչում լալագին։ Վարդի սիրուց «աշըղ» դարձած Պլպուլը ժողովրդական երգերի ոգով դիմում է այգուն, աղբիւրներին ու ծառերին.

Այգի՛, ընդ քեզ ասեմ, տո՛ւր ինձ պատասխան,

Ընդ է՞ր ոչ պահեցեր զվարդն իմ պատուական...

Ակո՛ւնք յորդախաղացք, մի՛ գնայք յառաջ,

Ծառե՛ր, թօթափեցէ՛ք զտերեւ ձեր կանաչ։ (Աղթամարցի, էջ 225)

Զստանալով պատասխան, Պլպուլն անիծում է այգուն եւ ողբում իր սիրելիի կորուստը, յայտնում իրեն տանջող տարակոյսն ու կասկածները.

Կարծեմ եթէ ծաղկունքն արին հետ ինձ քէն,

Տարեալ հեռացուցին ըզվարդըն յինէն։ (Աղթամարցի, էջ 227)

Ծաղիկները միաձայն պատասխանում են, թէ ոչ մի լուր չունեն Վարդից։ Այդ ժամանակ Պլպուլը թռչում է երկինք եւ դիմում թռչուններին։ Սրանք էլ պատասխանում են, թէ

Քո վարդըն չենք տեսեր, Աստուած վրկայ է,

Գընա, շրջիր յայլ տեղ եւ զնա որոնէ... (Աղթամարցի, էջ 229)

Պլպուլը շարունակում է իր անամոք ողբը, մինչև գալիս է Այգեպանը՝ աւետելով, որ եկել է Վարդի պատգամաբեր Մանուշակը եւ բերել ողջոյն ու մաղթանք։ Պլպուլն ուրախանում է եւ այգուն ուղղած անէծքը փոխարինում օրհնանքով։ Ապա մի ընդարձակ նամակ է ուղարկում Վարդին՝ գովերգելով նրան եւ արտայայտելով իր բոլուն սէրը։ Վարդը պատասխանում է Պլպուլի նամակին՝ խոստանալով բազում ծաղկունք առաքել նրան եւ խնդրելով «սակաւիկ» համբերել։ Վարդի պատասխանը ստանալով՝ դարձեալ մեծ բերկրանք է ապրում սիրահար Պլպուլը։ Եւ ահա բացւում է գարունը։

Ամպ ի վերուստ ի վայր յանկարծ որոտաց,
Բուսան ծաղկունք յերկրի եւ ազգքս ազգաց,
Վարդըն չէր ի միջին, պլպուլն որոնեաց։

Յետոյ տեսաւ զկանաչ տերեւըն վարդին,
Այլ պատուական պայծառ որպէս առաջին,
Վարդն էր կարմիր զգեցեալ որպէս ծիրանին,
Ծաղկունքն հաւասար երկըրպագեցին։ (Աղթամարցի, էջ 236-237)

Պլպուլը գորհնալով՝ փառք է տալիս երկնային Տիրոջը, որ ի վերջոյ սեփական «աչօք» տեսաւ իր սիրելի Վարդին։

«Այս վէպի մէջ, - գրում է Մանուկ Աբեղեանը, - գործողութիւնը սիրավէպի մի սքեմա է. բայց դրա գեղեցկութիւնը գործողութեան մէջ չէ, այլ սիրոյ գեղգեղանքի մէջ, որ բարձրանում է ցողաթուրմ պարտիզում, գեղազարդ բուրմունքի մէջ, սիրատարի սրտի այն խռովածուփ նուաղումների, անհանգիստ որոնումների ու սպասումների մէջ, երբ սէրը հեռու է կամ անպատասխան, եւ այն դաշն հրճուանքի մէջ, երբ յոյսը զօրանում է»²⁷։

Աղթամարցու պատկերած Վարդը օժտուած է թէ՛ երկնային եւ թէ՛ երկրային արարածի յատկանիշներով. նա անմահութեան բոյր է արձակում, դրախտի գեղեցկութիւն է եւ զարդ, հանդակերպ է որպէս «արքայ եւ տէր»։ Բայց նա ապրում է «վրայ աշխարհի» եւ ունի երկրային թագուհու կերպարանք, հագնում է կարմիր, «որպէս ծիրանի»։ Նա ոչ թէ ինքն է կարդում, այլ կարդալ է տալիս Պլպուլի ուղարկած նամակը։ Որոշակի վիպերգական շունչ ունի այդ քառատողը։

Առեալ տարան զնամակն ի դուռն վարդին,

Հագրէ վարդին դիմաց կարդացող բերին.

Կանգնաւ ի վերայ ոտաց եւ թուղթն ի յափին,

Ընթերցաւ բարձրաձայն ի լուր ամենին... (Աղթամարցի, էջ 233)

Ի տարբերութիւն սիրավէպի նախորդ մշակումների, Աղթամարցու տաղերում, ինչպէս նկատել է Արշակ Մադոյեանը, «Վարդն ու Սոխակը եւ նրանց շրջապատողները ատելի մարդկային են, ատելի կենսական է միջավայրը: Որքան բնական են յուսահատ սիրահարի տուայտանքները, ծաղիկների ու թռչունների միջամտութիւնը, կարեկցանքը եւ այլն»²⁸:

Այս տաղերում էլ պատկերուող յարաբերութիւնները երբեմն դառնում են այնքան երկրային-մարմնական, որ հասնում են սիրոյ վայելքին.

Բեր համբուրեմ ըզտիպըն քո,

Որ դուրանայ ցաւըս մարմնոյ... (Աղթամարցի, էջ 137)

Բանաստեղծն ինքը զգալով, որ չնայած կրօնական ենթատեքստին, ատելի շատ տուրք է տուել աշխարհիկ սիրուն, ինչպէս նախորդ այլաբանական սիրերգերի, այնպէս էլ այս տաղերի վերջում գրել է այսպիսի զղջական տողեր.

Գերի Գրիգոր անյիշելի

Եւ անպիտան Աղթամարցի,

Մէր աշխարհիս սուր երկսայրի,

Հոգիս նովաւ վիրատրի...

Յիմար Աղթամարցի, գիտե՞լքդ ժողով,

Ձի սէրն այս աշխարհիս հաւսար փռչի է,

Փառք եւ ուրախութիւնս այս անցաւոր է,

Կենացըս կայ վրճար, քանզի երազ է: (Աղթամարցի, էջ 141, 237)

Յատկանշական է, որ որպէս ինքնարդարացում, Աղթամարցին տաղերից մէկում զղջական խօսքերից բացի, նշել է նաեւ, որ տաղը գրել է պատուէրով, ինչը նաեւ վկայում է այն մասին, որ նման երգերի պահանջարկ կար անգամ վանական միջավայրում.

Աստուածատուր Մեծովեցի

Յիմէն խընդրեաց, եւ ես գրեցի.

Դուք ասացէք սըրտով ի լի

Ինձ եւ նորա՝ Տէր ողորմի: (Աղթամարցի, էջ 141)

Այս ամէնով հանդերձ, վարդի եւ սոխակի սիրավէպի աղթամարցիական մշակումները այդ ժանրի լաւագոյն գործերից են եւ, Բրիւսովի խօսքերով ասած, նման են «մի բոլոր բնական, ծիածանի բոլոր գոյներով շողշողուն գոհարների»²⁹:

Աղթամարցուն է վերագրւում մի շարք տարբերակներով լայն տարածում գտած կամ ժողովրդականացած մէկ այլ այլաբանական տաղ՝

«Յամէն Առաւօտ Եւ Լոյս»³⁰ : Այստեղ ալլաբանութիւնը շատ աւելի որոշակի է³¹ : Տաղի քնարական հերոս Այգեպանը մահկանացու մարդ է, նրա այգին՝ երկրային կեանքը³², իսկ Պլպուլը՝ մահուան հրեշտակ Գարրիէլը : Ի դէպ, վերջինս հենց այդ անուամբ էլ հանդէս է գալիս տաղի որոշ տարբերակներում : Եւ ահա, «ամէն առաւօտ եւ լոյս», այսինքն՝ իւրաքանչիւր օր Պլպուլ-Գարրիէլը ազդարարում-հրահանգում է այգեպան-մարդուն թողնել այգի-կեանքը («Արի ե՛լ ի յայս այգոյս») : Այսինքն՝ մահն ամէն ժամ կախուած է մարդու գլխին, եւ վերջինս շարունակ զգում, գիտակցում է իր գոյութեան անցողիկութիւնը : Բայց նա դիմադրում, ընդդիմանում է մահին՝ իրաւացիորէն պատճառաբանելով, թէ արիւն-քրտինքով է սարքել-կարգել իր կեանք-այգին : Այս պատասխանն էլ, անշուշտ, տաղում ալլաբանօրէն է շարադրուած :

Քար եմ բերեր սարերոյս,

Փուշ եմ կրեր ձորերոյս,

Պատ եմ բոլորեր այգոյս,

Կ'ասեմ, ք' «Արեկ, ե՛լ այգոյս» :

Ինչպէ՞ս ելնեմ ի յայգոյս,

Գեմ չար փուշ կայ պատերոյս... (Աղթամարցի, էջ 254-255)

Վերջին տողի «չար փուշը» մեկնաբանում է իբրեւ մարդկային մեղքի խորհրդանիշ, եւ այգեպան-մարդը չի ուզում լքել իր կեանք-այգին, քանի դեռ արմատախիլ չի արել այգու չար փուշը, չի մաքրագործուել մեղքերից : Այս տրպիկ միջնադարեան գաղափարից բացի տաղում շատ աւելի առկայ է մարդու թրթռուն կենսասիրական զգացումը, որ նոյն միջնադարեան մարդու հոգում գնալով զուգակցում եւ յաճախ գերակշռում էր անդրաշխարհի գաղափարին :

Մարդը կեանքի ընթացքում մեղքերից զատ նաեւ բարիք է գործում ու ստեղծում, ուստի եւ արդարացիօրէն ձգտում է նաեւ վայելել այդ բարիքի պտուղները : Այս գաղափարը Աղթամարցու տաղում արտայայտուած է Այգեպանի ստեղծած աղբիւրների, տնկած ծառերի, սարքած հնձանի, կառուցած տան, ցանած վարդենու եւ ծաղիկների ալլաբանութեամբ : Եւ Այգեպանը ցաւալի ու անարդար է համարում մահուան հրեշտակի պահանջը, քանզի, ինչպէս ասում է նա. «դեռ չեմ խմեր ի ջրոյս... դեռ չեմ կերեր ի պտղոյս... դեռ չեմ խմեր ի գինոյս... դեռ չեմ վայլեր շէնքերոյս... դեռ չեմ զոտոն առեր վարդոյս... դեռ չեմ զոտոն առեր ծաղկոյս» (Աղթամարցի, էջ 255-258) : Այսինքն՝ մարդը իր կարճատեւ ու վաղանցուկ գոյութեան ընթացքում չի յագեցնում կեանքի ծաւալը եւ մեռնում է կարօտով :

Յահէն կապեցաւ լեզուս,
Խաւրաւ աչերս ի լալոյս,
Աւա՛ղ իմ կարճ արեւուս...

Առին զհոգիս ի մարմնոյս,
Հանեցին զիս յիմ այգոյս... (Աղթամարցի, էջ 256-257)

Բաւական յուզիչ է տաղի աւարտը. Այգեպանի «հեռանալուց» յետոյ շարունակում է ծաղկել ու շողշողուն պտուղներ տալ այգին, որ տուեալ դէպքում յարատեւող մարդկային կեանքի խորհրդանշին է: Կայ այգին, բայց այլեւս չկայ այն մշակած Այգեպանը.

Ուրն կանաչ է այգոյս,
Որթըն բացւեալ է տընկոյս,
Խաղողն գոյնըզգոյն այգոյս,
Ծառեր-տունկըն շատ՝ այգոյս... (Աղթամարցի, էջ 257)

Հետաքրքիր է, որ տաղի մէկ այլ տարբերակում Այգեպանի հեռանալով քանդուում է նաեւ այգին, որն այս դէպքում արդէն տուեալ անհատի կեանքի խորհրդանշին է.

Ծաղկունքն վերացան յայգոյս,
Վարդըն թափաւ իմ այգոյս,
Յանկըն քակեցաւ յայգոյս,
Ահա որ ելայ յայգոյս... (Աղթամարցի, էջ 264)

Յիրաւի, այս տաղը միջնադարեան հայ քնարերգութեան գոհարներէց է, որ համակում է իր մարդկային ու համամարդկային խորքով, «իբր վայելուչ եւ ազդու հիւսուածքով»³³: Այն «կարծես Ֆրիկի՝ բախտի անարդարութեան առթիւ արած գանգատի այլ տարբերակն է»³⁴: Այստեղ «արտայայտուած է քրիստոնէական հաւատով ու բարոյականութեամբ սնուած անհատի եւ սէրը կեանքի նկատմամբ, եւ սիրոյ անյագուրդ ծարաւը, եւ ավստասանքը գեղեցիկը թողնելու համար, եւ, միաժամանակ, հաւատն ու երկիւղը հանդերձեալ կեանքի հանդէպ»³⁵:

Աղթամարցին հեղինակել է նաեւ սրբախօսական քերթուածներ: Դեռեւս 1516ին, երիտասարդ բանաստեղծը «առ յոտըս երջանիկ րաբունապետի»՝ Գրիգոր Արճիշեցու, շարադրել է Սրբուհի Մարինոսին նուիրուած մի ընդարձակ վարքաբանական բանաստեղծութիւն՝ հիմք ունենալով Յայսմաուրբներում լայն տարածում գտած «Վարք Երանուհի Կուսին Մարիամու, Որ Մարինոս Անուանեցաւ» վարքը³⁶:

Աւղայրեգեանի կարծիքով Աղթամարցու երկը գրուած է «իբրեւյան ճմարարութիւն կամ դաս. ուսուցիչն այդ առաջադրել է, հաւանօրէն, աշակերտի բանաստեղծական տաղանդը հունի մէջ դնելու եւ որոշակի գաղափարներ արծարծելու համար»³⁷: Այս կարծիքը չի բացառում Ակինեանի այն ենթադրութիւնը, թէ այդ թուականին (1516) «Գրիգորիս իր ուսուցչին հետ այցելած ըլլայ Ս. Մարինոսի վանքը, որ կը գտնուէր Հայոց Ձորի Կէմ եւ Կալպալասան (Ոստան Գաւառի) գիւղերուն մօտերը»³⁸:

Լինելով Աղթամարցու բանաստեղծական երախայրիքներէց, այս վարքագրական քերթուածը եւս, ինչպէս Ուռնկարի Ս. Նշանին ձօնուած գանձը, առանձնապէս աչքի չի ընկնում գեղարուեստական բարձր արժանիքներով, թէեւ շարադրուած է բաւական աշխոյժ պատումով ու կենդանի երկխօսութիւններով: Բանաստեղծը սրբի վարքը հետաքրքրաշարժ պատմութեան ձեւով է շարադրել,

Ձի ընթերցմամբ սորա զուարճանայք յոգի,

Չփառս երգեսցուք փրկչին ամենագորի... (Աղթամարցի, էջ 120)

Այսինքն՝ հետաքրքրաշարժ պատմութիւնը, ինչպէս եւ այլաբանութիւնը, միջոց են, կրօնի ետընթացի պայմաններում, ժամանակի ընթերցողի մէջ քրիստոնէական հաւատի ամրապնդման համար: Իսկ դա միտուած էր ժողովրդի բարոյականութեան ու ազգային ինքնութեան պահպանմանը: Ասենք, որ Աղթամարցին որոշակիօրէն ազգային-հայրենասիրական բնոյթի քերթուածներ չի գրել, բայց տարակոյս չկայ, որ թէ՛ իբրեւ կաթողիկոս եւ թէ՛ իբրեւ բանաստեղծ ու մտաւորական նա ըստ ամենայնի կապուած է եղել իր ժողովրդին, ապրել նրա ցաւերով ու հոգսերով: Տաղերից մէկի վերջում միայն, նա ընդամէնը երկու տողով ընտելագրել է մահմեդականների լծի տակ հեծող իր ժողովրդի վիճակը. Հազարացիք օրինօք քիւր

Չազգրս խանձնս որպէս ըզուր... (Աղթամարցի, էջ 142)

Աղթամարցու վաղ չրջանի (1519) գործերից է նաեւ «հազարացիներն» կողմից նոյն տարում Բաղէշում նահատակուած Աստուածատուր Խաթայեցու (մհ. 1519) չափածոյ վկայաբանութիւնը: Այս գործը եւս գրուած է «առ մեծ րաբունապետն» եւ հաւանաբար դարձեալ՝ վերջինիս յանձնարարութեամբ: Ի դէպ, Գրիգոր Արճիշեցին ինքն էլ հեղինակել է վկայաբանութիւններ, որոնցից մէկը վերաբերում է նշանաւոր Խոջա Միրաբին³⁹: Վերլուծելով Աղթամարցու հեղինակած վկայաբանութիւնը, Աւղայրեգեանը յանգել է այն եզրակացութեան, որ այդ երկը «ոչ թէ կրօնական քարոզչութեան սովորական մի նմոյշ է, այլ հայ ժո-

ղովրդի պատմական կեանքի մէկ կողմի՝ ի թիւս այլ տառապանքների, նաեւ կրած կրօնական հալածանքների գեղարուեստական վերարտադրումն ու ընդհանրացումը»⁴⁰ :

Վկայարանութիւնից բացի Աղթամարցին խաթայեցուն ձօնել է նաեւ մի ներբողական տաղ: Յատկանշական է, որ արդէն այս վաղ շրջանի գործում սրբացած վկան, որպէս «անօրինակ» մարդ, գովերգուած է աշխարհիկ սիրերգութեան պատկերներով.

Ի փռշոց նոր վարդ վառի,
Արմաւ եւ շուշան ծաղկի,
Բուրե՛ հոտ ըսքանչելի,
Լընու ըգքիմս ամենի:

Գունով ակըն գովելի,
Սուտակ, դահանակ ոսկի... (Աղթամարցի, էջ 128)

Իր միւս սրբախօսական տաղում, որն առաւել մօտ է վերը քննուած կրօնական-այլաբանական երգերին, Աղթամարցին նոյն կերպ եւ շատ աւելի գունագեղ ներբող է ձօնել անապատական Անտոն Թեբայեցուն: Վերջինս էլ որպէս «ընտրեալ» եւ «անօրինակ» մարդ, միաժամանակ կրողն է երկնային ու երկրային գեղեցկութեան: Ուստի եւ նա մի կողմից Արարչի յօրինած «աստուածանկար պատկեր» է, հոգեղէն պարգեւներ դիգող, «դրախտ վայելուչ ծառօք», անմահութեան հաց պարգեւող, «պսակ փառաց լուսեղէն», միւս կողմից՝ «գարուն գեղեցիկ», «երկիր զարդարեալ բուսօք», որն արեւից է իր լոյսն ընդունում, «ամպ հրաշագեղ», որ անծայր ծովից է ցօղ առնում, «մշտաբուխ աղբեր», որով արբենում են բոլոր արարածները, վերից շաղ առած «ծաղիկ ծխածան գունով վայելուչ», երկնային ցօղից ծնուած «մաքուր մարգարիտ պայծառ», «չքնաղ վայելուչ տըպար»,

Նարդոս եւ քրքում զըմոտ եւ հալուէ ի հընդկականէն.

Շարեալ պաղպաջուն ակունք, կայծ կարմիր ի Փիսոն գետէն,
Ոսկեակ, յակիմք եւ ակատ, կարկեհան բիւրեղ սառնօրէն...

Պատուական մաքուր արծաթ եւ սրբեալ անօթ լուսեղէն...

Սարդ եւ սօս, կիպար եւ նոճ, տապանակ ի յանփոտ փայտէն...
(Աղթամարցի, էջ 190)

Ինչպէս Առաքել Սիւնեցին իր ուսուցչին գովերգելիս, այնպէս էլ Աղթամարցին այս տաղում կիրառել է ծաղիկներից նեկտար հաւաքող մեղուի փոխաբերութիւնը, բնաւ չկրկնելով իր նախորդին.

Թեւօք քո թեթեւ թռոյի, զօրանաս յամենագօրէն.

Ժամանէ ի գիտութիւն ժըրաջան մեղուդ ի բրնէն.

Ի լերունքդ ի ներս շրջիս, ժողովես զփռչին ի ծաղկէն.

Լուսափայլ դամբար կազմես, քաղցրահամ կերակուրն ի քէն:
(Աղթամարցի, էջ 189)

Ինչպէս կրօնական-այլաբանական տաղերի որոշ հատուածներում, այնպէս էլ այստեղ բանաստեղծը այլեւայլ փոխաբերութիւններով երգել է «ընտրեալ» այլ մարդու գեղեցկութիւնը, զօրութիւնն ու բանականութիւնը, ըստ երեւոյթին՝ «Նորահրաշ պսակաւոր» Վարդանանց քաջերի շնորհալիական գովերգի որոշ ազդեցութեամբ.

Չագրդ արծրոյ ծայնէ, բարձրացիր եւ ել ի հաւէն,

Ղօղեալ հալածին թռչունք, գերդ զինուոր ի թագաւորէն...

Ջահրդ վառ ի վառ անշէջ, փարատես զխաւարն ի տանէն,

Ռամիցես գրլուխ զինուոր, զօրանաս ի զօրավարէն...

Վարսաւոր ծառըդ կենաց, գբեզ պահէ սոսկալի սրովքէն.

Տուն իմաստութեան շինեալ ի յահեղ հրգօրի բազկէն,

Բամեալ խընամես զազինս եւ թափես ի չար գազանէն...

(Աղթամարցի, էջ 189-190)

Նման հատուածները նկատի ունենալով՝ Ակինեանը Աղթամարցուն համարել է «միակն ի տեսակին եւ յաջողագոյնն՝ առնական գեղի նկարագրութեան մէջ»⁴¹: Անշուշտ, Աղթամարցին այդ ասպարէզում միակը չէ, բայց թերեւս իրօք յաջողագոյնն է:

Աղթամարցուց պահպանուել են նաեւ երեք տաղ-ուղերձներ. երկուսը՝ ուղղուած Գրիգոր Արճիշեցուն, մէկը՝ Յովսէփ Աղթամարցուն: Վերջինիս ձօնուած տաղում գովերգւում է «ազգի պարծանք» կրթական-մշակութային գործիչը, որը, ներբողների հերոսների նման, աւանդաբար գովաբանւում է իբրեւ իմաստութեան ու առաքինութեան մարմնաւորում: Տաղը գրուած է իբրեւ չափածոյ նմակ, ուր «մոլորական ի տանէ» եւ «թափառնիկ» բանաստեղծը իր ուսուցչին ուղղուած գովեստներին ու մաղթանքներին ներհիւսել է իր կարօտն ու սէրը նրա հանդէպ.

Որ եւ ըղձիք զսիրտս յօժարէ,

Ուստի տենչայ գրեզ տեսանէ,
Որ ներգրեալս վրկայէ,
Եւ քեզ յայտնի կացուցանէ... (Աղթամարցի, էջ 163)

Առաւել ուշագրաւ են Արճիշեցուն նուիրուած տաղերը, որտեղ բանաստեղծի անձնական ապրումներն ու զգացումները գերակշռում են գովերգութեանը: Ուսուցիչն ինչ-որ պատճառով երես է թեքել իր սանից⁴², եւ վերջինս նրան ուղղուած իր երկու տաղերն էլ սկսել է համանման գանգատական քառատողերով.

Գանգատ մ'առնեմ սիրով քեզ,
Թէ միտ դընես ու լըսես,
Չծառայս քո անտես չառնես,
Չխորհուրդ սրբոյիս յայտնեմ քեզ...

Այբէն մինչեւ ի Քէն քենէ գանգատիմ ես,
Բաներս ես ո՞ւմ ասեմ, երբ դու լըսել չես.
Գրիգոր մեծ ըաբունի՛, այս գրեցի ես,
Դուն առ ու քըննէ զիմ գանգատս ու տես: (Աղթամարցի, էջ 155, 157)

Ինչպէս տեսնում ենք, բանաստեղծը «սիրով» է անում իր գանգատը եւ երկու տաղերում էլ արտայայտում է իր խորին ակնածանքն ու անթաքոյց սէրը իր մեծ ըաբունի-ուսուցչի հանդէպ: Ահա երախտագէտ աշակերտի խոստովանութիւնները.

Ըաբունաբար խըրատես,
Չյիմարս ի յիմաստ ամես,
Չցրուեալս դարձեալ ժողովես
Թեւօքըդ քո ամփոփես...

Շրթամբք աստուածային համբուրեցեր զիս,
Որպէս ձուկըն ի ծովին դու սընուցեր զիս...

Ջեռեալ եւ ջերմացեալ քո սէրդ իմ սըրտիս: (Աղթամարցի, էջ 155, 158)

Ահա եւ ուսուցչի ներբողը, ուր դարձեալ կարող ենք գտնել որոշ բանաստեղծական գիւտեր կամ, Բրիւսովի խօսքերով ասած, «բանաստեղծական հանճարի բռնկումներ»⁴³.

Խոնաւ հաւու նըման անտուն գիտեմ գրեզ,
Ծիծեռնեկի նըման լուկ բուն կու շինես,
Կանաչ դաշտիդ նըման պայծառացեալ ես...

Սիրամարգի նըման սաւառնացեալ ես,

Վարդի թրփի նրման արթաս հագեր ես.
Տընկոցըդ խընկենոց անուշահոտ ես,
Բամ դրախտին ծառոյ նրման ծաղկեալ ես:

Յօղեա՛ զանձրեւ կենաց, գարնան նրման ես,
Իիծեալ դու պարծեսցիս, թէ արեգակն ես,
Փոխանակ քեզ նրման յաշխարհս չըգտայ ես... (Աղթամարցի, էջ 157-159)

Այսպիսի «անօրինակ» մարդու կողմից անտեսուելը մահու չափ խոցել է զգալուն բանաստեղծին, որն առանց այդ էլ դառն ու դժուարին կեանքով է ապրել.

Ի քէն թէ զիս բաժանես
՚Ի այլ զքո գերիս ոչ յիշես,
Յինէն գերեսդ շըրջես,
Զիս՞րդ կենդան կենամ ես...

Վախենմ թէ մեռանիմ ես
Ի քէն հեռի եւ անտես:

Որպէս ըզջուր գընամ ես
՚Ի ի տեղ դադար չառնում ես,
Ղարիպ կենօք շըրջիմ ես,
Կեանքս է հարամ, թէ գիտես: (Աղթամարցի, էջ 155-156)

Նման տողերը մի կողմից արձագանգ են բանաստեղծի ապրած աստանդական կեանքի, միւս կողմից բացայայտում են նրա մարդկային նկարագիրը:

Սակայն կենսագրական այս փաստի առիթով բանաստեղծին յաջողուել է հիւսել իսկապէս առինքնող բանաստեղծական պատկերներ, ինչպէս.

Ես եմ տարակուսեալ ի յայս աշխարհիս,
Զինչ բոյսն աշնանային գարնան մընամ ես...

Ի քեզ եկի ծարաւ, թէ արքուցանես,
Լուկ զջուրդ թաքուցեր, թէ պապակիմ ես...

Յորդոր գետոց նրման անհուն գնայի ես,
Նաւաբեկի նրման ընկըղմեցեր զիս... (Աղթամարցի, էջ 157-158)

Արճիշեցուն ձօնուած այս տողերը միջնադարեան անձնական բանաստեղծութեան արժէքաւոր նմոյշներ են, որոնք, Աւդալբեգեանի խօսքերով ասած՝ «ուղեգծում են միջնադարեան տաղերգութեան ոչ սիրային, բայց քնարական բանաստեղծութեան նոր հորիզոնները»⁴⁴:

Ինչպէս ապացուցուած է, Աղթամարցին Ալեքսանդր Մակեդոնացու Պատմութեան մէջ ներմուծել է իր յօրինած 48, իսկ Պղնձէ Քաղաքի Պատմութեան մէջ՝ 23 կաՔաններ⁴⁵: Այս չափածոյ հատուածների միջոցով բանաստեղծը, հետեւելով ստեղծուած աւանդոյթին, վերաշարադրել է նշուած պատմութիւնների հետաքրքրաշարժ դրուագների բովանդակութիւնը, ինչպէս նաեւ բանաստեղծօրէն արտայայտել պատմող դրուագներին համապատասխան մտորումներ ու զգացական զեղումներ: Ահա թէ ինչպէս է մեր բանաստեղծի շուրթերով Ալեքսանդրը ողբում իր կորցրած գեղեցկութիւնն ու զօրութիւնը.

Աւա՛ղ զիմ ատուրքս ու զկեանքս,
որ անցաւ նըման երազի,
Այս իմ լիալիր ճակատս
ծըրարեալ ի վարշամակի,
Աչքերս իմ ծովածաւալ
ի լուսոյ այժմիկ նըւաղի,
Իմ կարմըրացեալ այտերս
դեղնացեալ՝ գունըն քառամի:

Զօրութիւն բազկիս բարձաւ,
թուլացաւ մէջքս իմ առիծի,
Գարշապարս յուշկապարաց
կանգնելոյ այժմիկ կարօտի:
Զյաղթող եւ զհրգօր մարդիկ
սուսերաց ճարակ արարի,
Այժմ փոխըն դարձ եղեւ,
Իսքանդար՝ Մակեդոնացի⁴⁶:

Որքան էլ նման հատուածները ներհիւսուում են Պատմութեան հենքին, այսուհանդերձ, ինչպէս նկատել է Յասմիկ Սիմոնեանը, նրանք կրում են Աղթամարցու անհատական ստեղծագործութեան կնիքը եւ նշանակալից են «ոչ միայն բանաստեղծի ստեղծագործական նկարագրի, այլեւ առհասարակ մեր միջնադարեան բանաստեղծութեան մէջ երեւան եկած նոր միտումների ուսումնասիրութեան տեսանկիւնից»⁴⁷:

Ալեքսանդրի եւ Պղնձէ Քաղաքի Պատմութիւնների նկատմամբ Աղթամարցու մեծ եւ տեւական հետաքրքրութիւնը վկայում է լաճն ժողովրդականութիւն վայելող ստեղծագործութիւններին եւ առհասարակ ժողովրդական բանարուեստին նրա հոգեկան կապուածութեան մասին: Բանաստեղծին սրտամօտ են եղել միջնադարեան ժողովրդական երգերն ու ժողովրդագուսանական հայրէնները, որոնց ոգով ու տաղաչափութեամբ (7+8) նա յորինել է իր կաֆաներն ու մի շարք տաղեր: Դրանց մէջ է ամենավաղ թուական կրող նրա «Եղուկ Ու Հազար Մի Վայ» տաղը (Աղթամարցի, էջ 103-106):

Աղթամարցու նախասիրած չափերից է նաեւ 11 վանկանի երկանդամ (6+5) ոտանաւորը, որ հաւանաբար դարձեալ ժառանգել է ժողովրդական բանարուեստից: Ի դէպ, այդ չափով է յորինուած հանրայայտ «Կռունկ, Ուստի Կուգաս» երգը:

Ահա Աղթամարցու «Խօսող Հաւքը».

Պլպուլըն վերացաւ ի յօթըն թեւով,
Ասաց թէ հարցանեմ թոչնոցըն սիրով,
Եթէ գիտեն նոքա ասեն ինձ փութով,
Թէ չէ հանեմ յաչացս արտասութք քան զծով:

Թոչնոցը, այսօր գիտե՞ք զինչ գործեցաւ,
Զի վարդըն վայելուչ յայգոյն վերացաւ,
Միթէ տեսել էք դուք, լսել էք համբաւ
Կամ գողըն գողացաւ կամ զի՞նչ տիրեցաւ (Աղթամարցի, էջ 228-229)

Հարկ է նշել, որ Աղթամարցու բանաստեղծական ժառանգութիւնը թէեւ մեծածաւալ չէ, սակայն բաւական բազմազան է տաղաչափութեան առումով: Վերը նշուած չափերից բացի նա կիրառել է նաեւ 5, 7, 8, 9, 10 եւ 15 (5+5+5) վանկանի ոտանաւորները: Երբեմն բանաստեղծը միեւնոյն տաղում զուգակցել է երկու տարբեր չափեր կամ նոյն չափի մէջ զուգակցել է տարբեր անդամներ: Այդ ամէնը մեծապէս նպաստել է տաղերի բազմազան հնչողութեանը, ըստ այդմ նաեւ՝ դրանց յուզական ներգործութեանը: Կարդանք Աստուածածնին ձօնուած տաղերից մէկի տունը.

Անեղին տաճար
Բանին բարերար,
Գերագոյն գովեալ, Տիրամայր,
Դու յամէն լեզուէ.

Տիրամայր, որ զԱստուած ծնար: (Աղթամարցի, էջ 164)

Աղթամարցին նաեւ ակրոստիքոսի վարպետ է: Նրա մի շարք տաղերում տողասկզբի, երբեմն նաեւ տողավերջի տառերով յօգւում են հեղինակի անունը կամ հայոց այբուբէնը: Ամենավաղ թուականը կրող յիշեալ տաղի կենտ տողերի սկզբնատառերով կազմւում է «Եղկելի Գրիգորիսն ասել է թվին ԶԿԴ (=1515)»: Իսկ Ոււրնկարի խաչին ձօնուած մեղեղու եւ յորդորակի բանակապն է՝ «Խաչի ի խնդրոյ Վարդանա»: Առաւել բարդ բանակապ ունի Յովսէփի Աղթամարցուն ձօնուած տաղը, որի տների սկզբնատառերով յօգւում է՝ «Գրիգորիսն», իսկ վերջին տառերով՝ «Յովսէփին է»: Նման ինքնակամ կաշկանդումները գրեթէ չեն խանգարել բանաստեղծին ըստ ամենայնի արտայայտելու իր մտքի ու սրտի խօսքը: Աւելացնենք նաեւ, որ Աղթամարցին թէեւ յանգի վարպետ չէ, սակայն յաճախ ձգտել է միայնագութիւնից անցնել բազմայանգութեան, ինչը բազմազան չափերի հետ մէկտեղ նպաստել է նրա խօսքի բարեհնչիւնութեանը: Առհասարակ, Աղթամարցու տաղերը, ինչպէս նկատել է Վալերի Բրիւսովը, «կատարման բարեձեւութեամբ միջնադարեան տաղերգութեան լուսագոյններից են»⁴⁸: Այդ բարեձեւութեանը բանաստեղծը հասել է ոչ միայն տաղաչափական, այլեւ պատկերաւորման ու արտայայտչական միջոցների վարպետ կիրառմամբ⁴⁹: Ընդամին, ունենալով նաեւ «գրական արտասովոր տաղանք», Աղթամարցին բանահիւսական ու գրական ակունքներից առած աւանդական ձեւերին «իր անկեղծ աւիւնով այնպիսի գեղ ու փայլ» է հաղորդել, «որ շլացնում է ընթերցողներին»⁵⁰: Բացի այդ, ինչպէս տարբեր առիթներով նշեցինք, նա կատարել է նաեւ բանաստեղծական գիւտեր, ստեղծել ինքնատիպ պատկերներ...:

Աղթամարցին կրել է նաեւ արեւելեան բանարուեստի ազդեցութիւնը, ինչի վկայութիւնն է նրա տաղերում առկայ թուրքերէնի եւ յատկապէս պարսկերէնի տարրը, որ երբեմն արտայայտուել է նաեւ ամբողջական տողերով.

Նայեաց մէկ ընդ իս աշօքդ մէստան,

Կամ քաղցրիկ խօսիր կամ տուր պատասխան.

Ծիկարում քէպապ, կօզում եաշի դան,

Կեճայ ու կունտուգ դըլարըմ ֆըդան: (Աղթամարցի, էջ 208)

Ինչպէս գրում է Ակինեանը, «Գրիգորիս պարսկական նոր գրակա-նութեան ծանօթութեամբ կրթեց իւր ճաշակը, ընդարձակեց մտքին ասպարէզը, յղկեց գրիչը: Եւ այսպէս, պարսկական ազդեցութեան տակ, կրնայ ըսուիլ, բացաւ նոր դպրոց մը հայրենի հողի վրայ»⁵¹: Աղթա-

մարցու տաղանդի ուժն ու վարպետութիւնը պարսկական պոեզիայի ազդեցութեանը վերագրելը Բարկէն Չուգասեանը, իրաւացիօրէն, չափազանցութիւն է համարել⁵²։ Պարսկական իսկապէս բարձրարժէք քննադէրգութիւնը թերեւս ինչ-ինչ դրական հետքեր կարող էր թողնել միջնադարի մեր այս խոշոր տաղերգուի վրայ, բայց ոչ երբեք կրթել նրա ճաշակն ու յղկել գրիչը։ Եւ այն «նոր դպրոցը», որ դրական երեւոյթ է նկատել Ակինեանը, միջնադարեան հայ տաղերգութեան «արեւելեանացման» արդիւնք էր, օտարամուտ անյարիր շերտ, որ արեւելեան քաղաքական տիրապետութեան ազդեցութեան ներքոյ ակամայ պարտադրում էր տիպաբանօրէն «արեւմտեան» հայ մշակոյթին։ Եւ եթէ Բրիւսովն, իր հերթին որոշ ծայրահեղութեան մէջ ընկնելով, գրել է, թէ «Աղթամարցու պատկերները, համեմատութիւնները, ամբողջ ոգին միանգամայն արեւելեան են»⁵³, ապա դրանում մենք Աղթամարցու արժանիքը չենք նկատում եւ ոչ էլ համարում ենք նրա «մեղքը», այլ ժամանակի պարտադրանքը, որի ազդեցութեան տակ Աղթամարցուց (մասամբ նաեւ նրա նախորդներին) սկսած մինչեւ Սայեաթ-Նովա (1712-1795), մեր տաղերգութիւնը ստիպուած է եղել տուրք տալու հայկական ոգուն խորթ այդ ճաշակին։ Ահա թէ ինչու, Լէոյի ընկալմամբ, պարսկական տարրը «խճողել է» Աղթամարցու տաղերը⁵⁴։ Պատահական չէ, որ իր յետագայ զարգացման ընթացքում հայ բանաստեղծութիւնը ձգտել է թօթափել այդ արեւելեան նստուածքը եւ հասնել իր ազգային ակունքներին։

Վերադառնալով Աղթամարցուն, ասենք, որ արեւելեան պոեզիայի որոշակի ազդեցութեամբ հանդերձ, նա կարողացել է հարազատ մնալ հայ բազմադարեան քերթութեանը՝ ոչ միայն տաղերի «կատարման բարեձեւութեամբ» ու «քրիստոնէական գաղափարներով»⁵⁵, այլեւ ոգով կամ ընդհանուր հնչերանգով։ Ըստ այդմ, ի դէմս նրա ունենք մի իսկական խոշոր ազգային բանաստեղծ։ Այս է ապացուցում նրա ստեղծագործութեան անգամ ամենապարզ քննութիւնը, որ փորձեցինք կատարել վերելում, ինչպէս նաեւ պարսկական բանաստեղծութեան հետ նրա աղերսների քննութիւնը, որ կատարել է Արմանուշ Կոզմոյեանը յանգելով հետեւեալ եզրակացութեան. «Այս ամէնով հանդերձ, Աղթամարցին հարազատ է իր գաղափարախօսութեանը, իր հաւատին, իր էթնօմշակութային ասանդոյթներին»⁵⁶։

Աւարտելուց առաջ անհրաժեշտ է նշել նաեւ հետեւեալը։ ԺԵ. դարի «ընդմիջումից» յետոյ Գրիգորիս Աղթամարցին շարունակեց ԺԳ.-ԺԴ. դարերի բանաստեղծներ Կոստանդին Երզնկացու եւ Յովհաննէս Թլկու-

րանցու աշխարհիկ երգը: Ու չնայած հոգեւոր պետ լինելու հանգամանքը նրան խանգարեց հասնելու նշուած բանաստեղծների աշխարհիկ երգի անկաշկանդութեանը, սակայն նա կարողացաւ իր տաղերում հմտօրէն միահիւսել հոգեւորն ու աշխարհիկը եւ ստեղծել մի նորօրինակ եւ ինքնատիպ քնարերգութիւն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Մկրտիչ Պոտուրեան, «Գրիգորիս Աղթամարցի», *Բազմալէզ*, 1905, էջ 492:
- ² *Գրիգորիս Աղթամարցի*, XVI դ., աշխատասիրութեամբ Մայիս Աւդալբեգեանի, Երեւան, 1963, էջ 16:
- ³ Ներսէս Ակինեան, «Գրիգորիս Աղթամարցի», *Հանդէս Ամսօրեայ*, 1915, էջ 33; *Աղթամարցի*, էջ 14:
- ⁴ ԺԵ Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, մասն Բ, կազմեց Լեւոն Ոսալիկեան, Երեւան, 1958, էջ 573:
- ⁵ Ակինեան, էջ 33:
- ⁶ *Աղթամարցի*, էջ 16: Այս եւ Մարգարէ Արծիւեցու վկայութեան հիման վրայ պէտք է ենթադրել, որ Զաքարիա Դ. կաթողիկոսին (գահակալած 1489ից) յաջորդել է նրա եղբայր Զաքարիա Ե. Աղթամարցին, որ գահակալել է մինչեւ մօտ 1496:
- ⁷ Ակինեան, նոյն տեղում; *Աղթամարցի*, էջ 15-16:
- ⁸ Պոտուրեան, էջ 492; *Աղթամարցի*, էջ 13:
- ⁹ Աւդալբեգեան, էջ 19 եւ յաջորդող էջերը: Աւդալբեգեանը վրիպելով՝ Գրիգոր Զորթան Արծիւեցուն նոյնացրել է Գրիգոր վարդապետ Կաֆացու հետ (տե՛ս՝ *Աղթամարցի*, էջ 21-22):
- ¹⁰ Առաքել Դաւրիժեցի, *Պատմութիւն*, Վաղարշապատ, 1896, էջ 441:
- ¹¹ *Աղթամարցի*, էջ 20, 143, 150:
- ¹² Ն. Ակինեան, *Զաքարիա Եպիսկոպոս Գնունեաց*, Վիեննա, 1910 էջ 7; *Աղթամարցի*, էջ 26:
- ¹³ Գ. Յովսէփեանց, «Գրիգորիս Աղթամարցի», *Արարատ*, 1919, էջ 11-12:
- ¹⁴ *Աղթամարցի*, էջ 28-43:
- ¹⁵ Տե՛ս՝ Գարեգին Յովսէփեանց, «Նորից Գրիգորիս Աղթամարցու Մասին», *Հանդէս Ամսօրեայ*, 1930, էջ 56:
- ¹⁶ *Աղթամարցի*, էջ 47:
- ¹⁷ *Աղթամարցի*, էջ 104:
- ¹⁸ *Աղթամարցի*, էջ 105:
- ¹⁹ Գրիգոր Նարեկացի, *Տաղեր Եւ Գանձեր*, աշխատասիրութեամբ Արմենուհի Քէօշկերեանի, Երեւան, 1981, էջ 124:
- ²⁰ Ակինեան, էջ 40: Այս ճիշտ դիտողութիւնից անմիջապէս յետոյ Ակինեանը յայտնել է մեզ համար անընդունելի մի կարծիք, ըստ որի «Այս տաղերու մէջ երգած է Գրիգորիս իւր եղբայրը՝ Ամիր Գուրգէն, զոր կաթողիմ կը սիրէր»: Ըստ ոմանց, նաեւ մեզ, այս անունով եղբոր գոյութիւնն իսկ հարցական է: Շատ աւելի անընդունելի է Զէյմա Ռասէլի այն կարծիքը, թէ Աղթամարցու «Դու Ես Արեգակ, Լուսին Ի Լրման» տաղում կարելի է դիտարկել միասնական սիրոյ դրսեւորումներ (տե՛ս՝ James R. Russell, *Armenian and Iranian Studies*. Harvard Armenian Texts and Studies, 9, Cambridge,

- Massachusetts, 2004, էջ 507): Սա ընդամենը հայ միջնադարեան տաղերգութեան աւանդոյթներին ու զարգացման տրամաբանութեանը անհաղորդ լինելու արդիւնք է:
- ²¹ Նարեկացի, *Տաղեր Եւ Գանձեր*, էջ 118:
- ²² Ակինեան, էջ 39:
- ²³ *Աղթամարցի*, էջ 72:
- ²⁴ Տե՛ս՝ ծանօթ. թիւ 37:
- ²⁵ *Աղթամարցի*, էջ 83: Համոզիչ չեն այն կարծիքները, թէ իբր Աղթամարցին վարդին եւ սոխակին նուիրուած տաղերում ալլաբանօրէն պատկերել է ժամանակի հայ քաղաքական կեանքը եւ կամ սգացել է իր վաղամեռիկ եղբօր մահը (տե՛ս՝ *Աղթամարցի*, էջ 87-89):
- ²⁶ *Աղթամարցի*, էջ 86:
- ²⁷ Մանուկ Աբեղեան, *Երկեր*, հտ. Դ, Երեւան, 1970, էջ 498:
- ²⁸ Ա. Մաղոյան, *Միջնադարեան Հայկական Պօէմը*, Երեւան, 1985, էջ 278:
- ²⁹ Վալերի Բրիւսով, *Հայաստանի Եւ Հայ Գուլտուրայի Մասին*, Երեւան, 1967, էջ 92:
- ³⁰ *Աղթամարցի*, էջ 254-283: Ընդունելի են Աւդալբեգեանի փաստարկները յօգուտ այն բանի, որ այս տաղի հեղինակը Գ Ա է (տե՛ս՝ *Աղթամարցի*, էջ 312-324): Ճիշտ կը լինէր, սակայն, եթէ նա կազմէր եւ բնագրերի բաժնում զետեղէր միայն տաղի հեղինակային բնագրին հնարաւորին չափ մերձ մի համահաւաք բնագիր՝ մէկ տասնեակի հասնող տարբերակները բերելով ծանօթագրութիւնների մէջ: Հանգուցեալ գրականագիտուհին փորձել է ապացուցել նաեւ, որ Աղթամարցու գրչին է պատկանում լայն տարածում գտած եւ տարբեր հեղինակների վերագրուած «Գարունն է Բացուեր, Վարդն ի Պաղչանին» տաղը, որը նոյնպէս հրատարակել է մի շարք տարբերակներով (տե՛ս՝ *Աղթամարցի*, էջ 238-253): Որոշ ձեռագրերի վկայութեամբ, այս տաղը երգելով տարածել է Յակոբ Նետրաբենց Արծկեցին, որն ըստ Աւդալբեգեանի, «Գրիգորիսի ժամանակակիցն է ուղղակի իմաստով. եթէ անձամբ ծանօթ էլ չլինի նրան, ապա շատ լաւ եւ ամփոփալանօրէն կարող է ծանօթ լինել Աղթամարցու ստեղծագործութիւններին» *Աղթամարցի*, էջ 309): Այստեղ է, որ վրիպել է գրականագիտուհին: Յակոբ Արծկեցին Ժեղարի բանաստեղծ է՝ վախճանուած 1501ին: Հետեւաբար նա չէր կարող ծանօթ լինել 1510ականներին գրական ասպարէզ իջած Գրիգորիս Աղթամարցու ստեղծագործութիւններին: Ինչ վերաբերում է «Գարունն է Բացուեր, Վարդն ի Պաղչանին» տաղին, ապա այն ստեղծուել է ամենաուշը Ժեղարում, թէեւ կարող էր աւելի վաղ չրջանին վերաբերել: Նշենք, որ Յակոբ Արծկեցին երգելով տարածել է նաեւ ԺԳ.-ԺԴ. դդ. բանաստեղծ Կոստանդին Երզնկացու տաղերը (տե՛ս՝ *Աղթամարցի*, էջ 310):
- ³¹ Ընդունելի չէ Աւդալբեգեանի այն բնորոշումը, թէ այս տաղը «քաղմիմաստ ստեղծագործութիւն» է եւ կարող է ընկալուել նաեւ իբրեւ հոգու եւ մարմնի պաքարի ալլաբանութիւն, ինչպէս նկատել է Նիկողայոս Մառը (տե՛ս՝ *Աղթամարցի*, էջ 95):
- ³² Աբեղեան, էջ 493:
- ³³ Լէօ, *Երկերի Ժողովածու*, հտ. 3, Երեւան, 1969, էջ 215:
- ³⁴ Բրիւսով, էջ 92:
- ³⁵ *Աղթամարցի*, էջ 97:
- ³⁶ Տե՛ս՝ Լեւոն Մելիքէթ-Բեկ, «Գրիգորիս Աղթամարցու «Վարք Մարինոսի» Պօէմը Եւ Նրա Նախատիպը», *Տեղեկագիր*, 1945, թիւ 2, էջ 77-89: Քերթուածը եւ նրա վերլուծութիւնը տե՛ս՝ *Աղթամարցի*, էջ 48-51, 107-120:
- ³⁷ *Աղթամարցի*, էջ 48:

- ³⁸ Ներսէս Ակինեան, Գրիգորիս Ա. Կաթողիկոս Աղթամարի, Վիեննա, 1958, էջ 28:
- ³⁹ Տե՛ս՝ ԺԵ. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, մասն Գ, էջ 82-83ի ծան.:
- ⁴⁰ Աղթամարցի, էջ 51-52:
- ⁴¹ Ակինեան, էջ 40:
- ⁴² Աւղալբեզեանի կարծիքով, որ հաւանական ենք համարում, Գրիգոր Արճիշեցին դժգոհ է եղել Աղթամարցու ալլաբանական տաղերից, որոնց մէջ «տեսել է ւաւիլի աշխարհիկ զգացումներ» Աղթամարցի, էջ 77):
- ⁴³ Բրիւսով, էջ 92:
- ⁴⁴ Աղթամարցի, էջ 63:
- ⁴⁵ Տե՛ս՝ Յասմիկ Սիմոնեան, Հայ Միջնադարեան Կաֆաներ (X-XVI դդ.), Երեւան, 1975, էջ 103, 158-159:
- ⁴⁶ Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, աշխատասիրութեամբ Յասմիկ Սիմոնեանի, Երեւան, 1989, էջ 353:
- ⁴⁷ Սիմոնեան, էջ 267:
- ⁴⁸ Բրիւսով, էջ 92:
- ⁴⁹ Այս կապակցութեամբ տե՛ս՝ Վարազ Ներսիսեանի Հայ Միջնադարեան Տաղերգութեան Գեղարուեստական Միջոցները, Երեւան 1976, էջ 33 եւ յաջորդող էջերը:
- ⁵⁰ Աբեղեան, էջ 493:
- ⁵¹ Ակինեան, էջ 39:
- ⁵² Տե՛ս՝ Բարկէն Չուքսազեան, Հայ-իրանական Գրական Առնչութիւններ, Երեւան, 1963, էջ 129-130: Ընդունելի չէ նաեւ Աւղալբեզեանի այն կարծիքը, թէ Աղթամարցին իր տաղերի մէջ ներհիւսելով ալլաբեզու ժողովրդաբանութիւնները, «առաւել մտերմութիւն ու ջերմութիւն է հաղորդել իր երգերին» (Աղթամարցի, էջ 98):
- ⁵³ Բրիւսով, էջ 92:
- ⁵⁴ Լէօ, էջ 214:
- ⁵⁵ Բրիւսով, էջ 92:
- ⁵⁶ Արմանուշ Կոզմոյեան, Հայոց Եւ Պարսից Միջնադարեան Քնարերգութեան Համեմատական Պոէտիկան (10-16-րդ դդ.), Երեւան, 1997, էջ 152:

THE GREATEST POET OF THE 16TH CENTURY
GRIGORIS AGHTAMARTSI

(Summary)

HENRIK BAKHCHINIAN

16th century Armenian poetry bore witness to the times. Several poets active in this period, both on and off the Armenian highland, continued and developed the best poetic traditions of the previous centuries. Their works are closer to the popular atmosphere, unhindered by religious and ideological constraints.

Grigoris Aghtamartsi, the greatest poet of the century, was born in late 15th century. He was descended from the noble family of the Artsrunis. His grandfather was anointed 'king' in 1466, while two of his uncles became Catholicos. He himself was anointed Catholicos of Aghtamar in 1512.

This talented poet was a scribe and a miniaturist too.

Bakhchinian highlights the thirty or so poetic works of Grigoris, the first of which dates back to 1515. He highlights the optimistic mood of Grigoris's poetry, including the rose and the nightingale allegory by which Grigoris expresses his worldly feelings and thoughts, the dilemma of serving the demands of both body and soul, the human aspect of the characters Grigoris depicts and the aesthetic means he uses in his endeavor.